

ՀԱՅ-ԹՐԵԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻ ԲԱՑՄԱՆ ԱՐՁԱԳԱՆՈՒՄ՝ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ «ԹԱՅՄՁ» ԹԵՐԹԻՆ ՄԵՋ

«Աշխարհի բաժակի հրաւերը կը քայքայե «Երկաթեայ վա-րագոյր»ի վերջին կտորը» խորագիրը կրող յօդուածով մը, բրի-տանական «The Times» թերթը նշած է, թէ հայ-թրքական սահ-մաններու բացումը շրջադարձային պահ պիտի ըլլայ Թուրքիոյ համար, որ կը ձգտի ազդեցութիւն ձեռք բերել Կովկասի եւ Մի-ջին Ասիոյ մէջ...

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՃՈՒՍՏՈՒԹՅԱՆ ԴԻՏԻ ԱՉՂԷ ՀԱՅՍՏԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԶԲՍԱՆՐԳՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Հայաստանի հիւրանոցներու ընկերակցութեան նախագահ Յակոբ Յակոբեան, լրագրողներուն յայտնեց, թէ համաշխար-հային տնտեսական ճգնաժամի հետեւանքները բացասական ազդեցութիւն պիտի ունենան Հայաստանի ներքին զբօսաշրջ-րութեան զարգացման վրայ, որովհետեւ ստեղծուած իրադրու-թիւնը եւ դրամի արժեզրկումը յանգեցուցին ազգաբնակչու-թեան եկամուտներու նուազման, ինչպէս նաեւ աշխատատե-րիներու կրճատման:

Յակոբեան նաեւ յայտնեց, թէ անհաւանական է զբօսաշրջ-քային ծառայութիւններու գինի կրճատում, քանի որ, ըստ իրեն, հիւրանոցներու ծախսերուն 80 տոկոսը կը կազմեն աշխատա-վարձերը, տուրքային եւ հասարակական վճարումները:

ԹՈՒՐԶ ԸՆԴԴԻՍԱԴԻՐՆԵՐԸ ԴԵՍ ԵՆ ՀԱՅ-ԹՐԵԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻ ԲԱՑՄԱՆ

Թրքական «Հիւրիյեթ» թերթը իր Ապրիլ 16-ի համարով հա-ղորդած է, թէ ընդդիմադիր կուսակցութիւններու պատգամա-ւորներ, որոնք այցելած էին Ատրպեյճան՝ թուրք-ազերիական հանդիպման ներկայ գտնուելու համար, յայտնած են, որ իրենք կտրականօրէն դէմ են հայ-թրքական սահմանի բացման:

Նշենք, որ թուրք եւ ազերի պատգամաւորները ներկայ էին «Ատրպեյճան-Թուրքիա» համընդհանուր շախեր եւ խնդիրներ» հանդիպման, որ տեղի ունեցաւ Պաքուի մէջ:

Հանդիպման ընթացքին Հանրապետական ժողովրդական գլխաւոր ընդդիմադիր կուսակցութեան անդամ Շիքրիի Էլեք-տաղ յայտարարած է, թէ իր երկիրը կը փափաքի, որ Հարա-ւային Կովկասի մէջ խաղաղութիւն, կայունութիւն եւ անվտանգ-գութիւն տիրէ, «Սակայն խաղաղութիւնը եւ անվտանգութիւնը չեն կրնար երաշխարարուիլ՝ Հայաստանի կողմէ «գրաւեալ» տարածքներու պատճառով», անելուցած է Էլեքտաղ: Ան յի-շեցուցած է նաեւ, որ Լեռնային Ղարաբաղի «գրաւում»ը եղած է հայ-թրքական սահմանի փակման պատճառը, եւ սահմանի բացումով՝ Թուրքիան Հայաստանին պիտի պարգևատրէ հողի բնագրաման համար, հաստատելով, որ հարցախոյզները ցոյց կու տան, որ թուրքերուն 95 տոկոսը համաձայն է հայ-թրքական սահմանի բացումին, միայն երբ գտնուին կողմերը բաւարարող լուծումներ:

Ազգայնական շարժում կուսակցութեան անդամ Աթիլա Զա-յա, իր կարգին, նոյն հանդիպման ընթացքին նշած է, որ հայ-թրքական սահմանը պէտք է չբացուի, քանի որ յառաջընթաց չէ արձանագրուած Հայոց Յեղասպանութեան եւ Լեռնային Ղա-րաբաղի հակամարտութեան հարցերուն մէջ:

ԱՆՊՐՈՒԹԵԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵՆԷՆ ԳՈՒՄԱՐՆԵՐ ՍՏԱՅՈՂՆԵՐՈՒՆ ԹԻՎ ԿԵՅ ՄԻՒՆՈՆԸ ԱՆՅԱՄ

Միացեալ Նահանգներու աշխատատրական հարցերու նախա-րարութիւնը հաղորդեց, թէ նախորդ շաբթուան ընթացքին անգործու-թեան ապահովագրութեան օժանդակութիւն ստանալու համար առա-ջին անգամ դիմում կատարողներուն թիւը իջած է 610,000-ի, նախ-անցեալ շաբթուան ընթացքին արձանագրուած 663,000-ին փոխարէն:

Նման օժանդակութիւններ ստացողներուն թիւը երկրին պատ-մութեան մէջ առաջին անգամ ըլլալով անցած է վեց միլիոնի սահմանը:

Միւս կողմէ, առեւտուրի նախարարութիւնը հաղորդեց, թէ նոր բնակարաններու եւ յարկաբաժիններու կառուցումը 10.8 տոկոսով անկում մը արձանագրած է անցեալ ամսուան ընթացքին:

Վերջապէս, Յունուար-Մարտ եռամսեակին իրենց բնակարանա-յին պարտքերը չվճարելու պատճառով՝ բնակարաններ կորսնցնե-լու վտանգը դիմագրաւող ամերիկացիներուն թիւը 24 տոկոսով աճ արձանագրած է, հակառակ անոնց թիւը նուազեցնելու նպատակով պետական կարգ մը միջամտութեան:

ՀԱՅՎԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՒԻՐՈՒՄ ԳԻՏԱԺՈՂՈՎ ԼՈՍ ԱՆՃԵԼՍԻ ՄԵՋ

(Շարունակուած 2-րդ Էջէն)

անդ երբ մարդկութեան դէմ կատարուած են այնպիսի բար-բարոսական վարագոյրութիւններ, որոնք կը բնորոշուին որպէս մարդկութեան դէմ կատարուած ցեղասպանութիւն: Մենք գիտենք նաեւ որ Դուք որքան կարեւորութիւն կու տաք այն իրողութեան, երբ մենք անկեղծօրէն հաշուի կը նստիք նման դէպքերու հետ, որպէսզի ապագային մարդկութիւնը գերծ մնայ նման աղետներէ: Մենք կը յուսանք որ Դուք կը գնահատէք այն, որ ամերիկեան արժեքներուն լաւագոյնս չեն ծառայէր պատ-մութիւն վերաշարադրելը, որպէսզի յարմարի կարծաւորեալ ու ժամանակակից քաղաքական շահերու: Կը յուսանք նաեւ որ Դուք կը գնահատէք նաեւ այն ճշմարտութիւնը, թէ Հայաստանի ու Թուրքիոյ միջեւ իրական հաշտութեան շրջան մը կը սկսի, երբ Հայկական Յեղասպանութիւնը արժանանայ ճանաչման:

Հետեւաբար կը խնդրենք, որ Դուք կայուն մնաք Ձեր համո-զումներուն ու խոստումներ վրայ, միանգամընդմիջ տ փարատէք ամէն տեսակի շփոթութիւն՝ ստեղծուած ցեղասպանութեան հանդէպ ԱՄՆ-ի բարոյական կեցուածքին շուրջ, որ եթէ յստակ է նազի Գերմանիոյ ողջակիզման կամ Գամպուտիայի Փոլ Փոթի վարչակարգի հանդէպ, ապա նոյնը չէ այն ցեղասպանական ահաւոր ոճիրին հանդէպ, որ կատարուած է ինը տասնամեակ առաջ ուժեղ պետութեան մը կողմէ ու տակաւին կը մնայ ան-պատիժ, իսկ ժառանգորդները կը շարունակեն ուրացման քա-ղաքականութիւնը եւ ճնշում կը բանեցնեն այլ պետութիւններու վրայ, որպէսզի անոնք ալ լուր մնան այս հարցին մէջ: Յեղա-սպանութեան անցեալի ու ապագայի գոհերու յոյսը կը ծանրա-նայ Ձեր ուսերուն: Կատախ եւք որ Դուք ճիշդ քայլը կ'առնէք ու չէք շեղիր Ձեր ու ամերիկեան ազգի սուրբ իտելալներէն, որոնք վրայ հաստատուած է մեր երկիրը:

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԸԱՐԱՆ Աշրաֆիէ

ԱՊՐԻԼԵԱՆ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Հինգշաբթի՝ 23 Ապրիլ 2009 ՀՍԿՈՒՄԻ ԵՐԵԿՈՅ

Կազմակերպութեամբ՝ Հայ Կաթողիկէ Համալսարանականներու Միութեան

Հայ Կաթողիկէ Պատրիարքարանի շրջափակէն ներս, երեկոյեան ժամը 8:00-ին:

Ուրբաթ՝ 24 Ապրիլ 2009 ՀՈԳԵՀԱՆԳԱՏԵԱՆ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ

Նախագահութեամբ՝ Ամենապատիւ ՏԵՐ ՆԵՐՍԵՍ ՊԵՏՐՈՍ ԺԹ.

Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց Կաթողիկոս Պատրիարքին

Օրուան պատգամը պիտի փոխանցէ Հայր Մեսրոպ Վրդ. Սուլահեան

Ս. Գրիգոր Լուսաւորիչ (Ժամհուր-Ժէթաւոյի) Ճեմարանի բակին մէջ, ժամը 17:00-ին:

Թէքեան Մշակութային Միութիւն

ՇՆՈՐ ՀԱՀԱՆԴԷՍ

Նուիրուած՝ Արծալկազիր-Հրապարակագիր ՀԱՅՎ ՆԱԳԱԾԵԱՆԻ

«ԽՃԱՆԿԱՐ

Կես դարու հրապարակագրութեան, 1957-2009»

Գիրքի լոյս ընծայման առիթով Կը գրախօսէ՝ ԱՐԱՍ ՍԵՓԵԹԵԱՆ

Պ. Գեղարունտաւանյան յայտագիր

Տեղի կ'ունենայ Երկուշաբթի, 20 Ապրիլ 2009-ի երեկոյ-եան ժամը 8:00-ին, Թէքեան Կեդրոնի Հրաչեայ Սեղրակեան սրահին մէջ, ժըմմելով:

ՄԻՕՐԵԱՅ ԶՐՕՍԱՊՏՈՅՏ ՊԵՏՐՈՍ ԳԻՒԹԻ «ՄԱՐ ՇԱՐՊԷԼ» Կազմակերպութեամբ Selen RAZMIG-ի ՏԵՅՆՈՒԹԻՒՆ «ՄԱՐ ՇԱՐՊԷԼ» ՈՒՆԵՍԿՎԱՅՐ ՃԱՅՁԱՐԸՆ «ՄՆԱԿՅԱ» ԱՆԿՆԵՐԸ Կիրակի, 3 Մայիս 2009-ին Հաւաք Եւրոպեան ժամը 8:30-ին, Նահիլ «Bank of Beirut»ի առջեւ Յանգի մանրամասնութեան համար հեռաձայնը՝ 03 242531 թիւին

ԱՅՍՕՐ՝ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԵՋ

19 ԱՊՐԻԼ *19 Ապրիլ 1587. Սըր Ֆրանսիս Տրէք. Գ-ատիցի մէջ կ'ընկղմէ պայանական նաւատորմը: *19 Ապրիլ 1824. մահացաւ բանաստեղծ Եոթ Կորտըն Պայրընը: *19 Ապրիլ 1881. մահացաւ Պեննամին Տիգրայելին: *19 Ապրիլ 1882. մահացաւ գիտնական Զարգ Տարբիմը: *19 Ապրիլ 1896. լոյս կը տեսնէ Թեոտոր Հերցելի «Երբայական պետութիւնը» (Տը Երուիչ Սթէյք) գիրքը: *19 Ապրիլ 1914. մահացաւ Նոպլեան մրցանակակիր Փիեռ Գիլիմը: *19 Ապրիլ 1989. մահացաւ անգլիացի գրող Տաֆնի Տի Մորիէն: *19 Ապրիլ 2005. Պեննետիքոս 16-րդ (Գարտիմալ Ժոպէֆ Ռ-ազիմկը) կը դառնայ 265-րդ պապը:

Ս.Գ.Հ.Կ. ԸՆՏՐԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Ս.Գ.Հ.Կ. ընտրական կեդրոնական մարմինը կու գայ ձեռ-տեղեկացնել, թէ յետ այսու իր Նոր Հաճոյ եւ Անթիլիասի գրա-սենեակները բաց են ընդունելու եւ ստուգելու ձեր ընտրա-կան կարգավիճակը:

- Նոր Հաճոյ գրասենեակ (01-444738) բաց է շաբթուան բոլոր օրերը ժամը 9:00-էն 8:00, Շաբաթ օրերը, ժամը 10:00-էն 5:00:

- Անթիլիասի գրասենեակ (04-522345) բաց է շաբթուան բոլոր օրերը ժամը 11:00-էն 4:00 բացի՝ Շաբաթ եւ Կիրակի օրերէն:

Ս.Գ.Հ.Կ. ԸՆՏՐԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ԴԱՄԱԿՈՍ ԴԱՄԱԿՈՍ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

Հովանաւորութեամբ ԱՐԴԻ. ՅՈՎԱԵՓ ԵՊՍ. ԱՌԱՍՈՒԹԵԱՆԻ Առաջնորդ Դամասկոսի Կաթողիկէ Հայոց

Կազմակերպութեամբ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՄԻՈՒԹԵԱՆ

ԱՆՆԱԿՆԵՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԵՐԳ

Կատարողութեամբ՝ ՊԵՅՐՈՒԹԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԸԱՐԱՆԻ «ԿՈՈՒՆԿ» ԵՐԳՉԱԽՈՒՄԲԻ

Խմբավարութեամբ՝ Դոկտոր ԷՏՈՒՐ ԹՈՐԻԿԵԱՆԻ

Դաշնակի ընկերակցութեամբ ԹԱՄԱՐ ԳԱՍԱԳԵԱՆԻ

Եւ ԴԱՄԱԿՈՍԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՄԻՈՒԹԵԱՆ «ԸՆԱՐ» ԵՐԳՉԱԽՈՒՄԲԻ

Խմբավարութեամբ՝ ՇԱՆԹ ԸԵՇԻՇԵԱՆԻ

Դաշնակի ընկերակցութեամբ՝ ԱՌՆՕ ԸԵՇԻՇԵԱՆԻ Ուրբաթ, 1 Մայիս 2009, երեկոյեան ժամը 9:00-ին Հ.Կ. Ամինեան սրահին մէջ:

Haigazian University Accepting Applications Now Fall 2009 - 2010 * Faculty of Business Administration & Economics (B.A./B.B.A./M.B.A.) * Faculty of Sciences (B.S.) * Faculty of Social & Behavior Sciences (B.A./M.A.) * Faculty of Humanities (B.A.) Kantari, Beirut, Admissions Office: 01-349230/1, 01-353010/1/2 admissions@haigazian.edu.lb www.haigazian.edu.lb

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ Հ.Կ.Բ.Մ.-ի Թմարգայի դարմաստունը վերաբացած է իր դռները: Դարմաստունը իր յարգոյ այցելուները կ'ընդունի շաբթուան բոլոր օրերը, բացի Կիրակիէն:

Կ՝ՈՒԶՈՒԻ Kodak Հաստատութիւնը կարիքը ունի electronic ուսա-նած երիտասարդի մը: Հետաքրքրուողները կրնան հեռաձայնել 03-286678 թիւին կամ CV-ն ուղարկել հետեւեալ e-mail-ին: kanekour@dm.net.lb

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ Հայկուի Հովիւեանի մահուան Գ. տարեկիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 19 Ապրիլ 2009-ին, Ռըմէլի Ս. Յարութիւն եկեղեցոյ մէջ, յա-ւարտ Ս. պատարագի:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ Մարի Սիլվեանի (ծնեալ՝ Տաղլեան) մահուան Ա. տարե-կիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 19 Ապրիլ 2009-ին, Թրատի Ս. Աստուածածին եկե-ղեցոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ARARAD DAILY NEWSPAPER Tel. - Fax: 01-56 55 99 P.O.Box: 175275 MAR MIKHAEL, BEIRUT - LEBANON Website: www.araraddaily.org e-mail: ararad@terra.net.lb جريدة يومية سياسية ارمنية تصدر عن شركة ماسيس للطباعة والنشر (ش.م.م.) المدير المسؤول: ابيسوغوم كريشيكيان